

**ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի ուղերձը Ընտանիքի միջազգային օրվա կապակցությամբ**

Հարգելի հայրենակիցներ

Ընտանիքը բացառիկ արժեք է, որով մարդկությունն առաջնորդվել է իր ստեղծման առաջին պահից ու զարգացման ողջ ընթացքում: Աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի համար ընտանիքն ազգապահպանության գլխավոր հիմքն ու երաշխիքն է համարվում: Նրա շուրջ են հիմնավորված հայոց լեզուն, մշակույթը, պատմությունը, ազգային ինքնությունն ու ավանդույթները:

Շնորհավորում եմ բոլորիս Ընտանիքի միջազգային օրվա կապակցությամբ, թող սերն ու երջանկությունը տիրի բոլորիս օջախներում:

Ջերմ բարեմաղթանքներով՝

**Գեղարքունիքի մարզպետ**

**Գնել Սանոսյան**